

պու կիւնքի խմթիհանընըզտա տիտեի  
մէմսունիյէթլէ կէօրտիւլիմիզ ահվա-  
լը թէրագգըյաթընըզէ սասլիթ օլ-  
մուշ տրը : Արթըդ պունտան սօնրա  
տախի սիզէ լազըմ օլան սայու դայ-  
րէմտէ գուսուր իթմէյէրէք իգմազը  
թահսիլ իլէ՝ Տէօվլէթ վէ Միլէթ նա-  
զորընտա մէմտուհ վէ մէրզուազ օլմագ  
ֆէղայիլնի իքթիսապ իթմէլիսիլ:

զիսիս մէջ գոհունակութեան աչօք  
տեսայ :

Ուրեմն, ո աշակերաք, գուք եւս  
կը պարտաւորիք սյսուհեաեւ յարա-  
տեւ աշխատասիրութեամբ ձեռք բե-  
րէլ ձեր կոշման վերաբերեալ ուս-  
մունքները և կատարելութիւնը, ո-  
րմացմով կարողանացք օգտակար հան-  
գիսանաւ Տէրութեան և Ազգին :

## ԱՌԱՔԵԼԱՇՆՈՐՀ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ ԵՒ ՄԵՇԱՐՈՅ ՀԱՆԴԻՍԱԿԱՆԻ

Ազգի մը կամ ժողովրդեան մը  
անցեալ ժամանակի պատմական կեան-  
քը փրկաւէտ և օգտակար հայելի մ'է,  
որ ներկայ սերունդը մի առ մի կը  
աւանէ ինչու իւր շքեղ փառաց պան-  
ծալի գեղանիարն, նոյնպէս իւր նաևմ-  
աւուրց տիսուր յիշատակութիւնը .  
ինչու Հայրենեաց պաշտպան և նորա  
պայծառութեան ջանախնդիր անմահ  
սատարներն, նոյնպէս նորա փառքը  
նեմայնող ազգադրուժ վաս մասնիչ  
ները : Այս նկատմամբ երբ մարդկա-  
յին ազգի տարեգրութիւնը թղթա-  
տենիք մեր տեսութենէն պիտի անցնին  
խումբ մի հրէշական ուրուականներու-  
սեադիմ' ստուերներ, որք տոսկումն և  
համանգամայն զայրոյթ կը պատճա-  
ռեն մեզ, եւ հատընաիր քաջաց ակ-  
նախտիւ լուսերեւոյթներ, որք մեր  
միտքն ու հոգին անպատում հիաց-  
մամբ կը լուցանեն : Ահա գոռող և  
ամբարտաւան Քաերքսէս մի, որ մե-  
ծութեան և փառաց բարձր կատա-  
րէն մահ, գերութիւն և աւերած կը  
սպառնայ բովանդակ Յունաստանի ,  
յանցս Թերմափիլէայ քո՞ն Լեւսնի-  
դասէ կըած կատրածէն յէտոց մի ըդ-  
ինի միւսոյ Ելլադայի դաշտերու մէջ

՚ի հող կը ծածկէ իւր անթիւ տիեզե-  
րասասան բանակներն, և ինքն կոր ՚ի  
գլուխ, քամակաբեկ, մազապուր կը  
զերծանի իրեն սպառնացող դժնդակ  
մահէն : Ահա զիւցազնատիպ Գուլշ-  
ելմոս մը, որ իւր լայնալիճ ազեղամբ  
անգութ Կրիալերի սրտն երակը իր-  
զելով՝ կը խորտակէ բռնութեան այն  
ամենածանր լուծը, որս տակ կը հե-  
ծէր տառապագին թշուառն Հելուե-  
տիա : Բայց ինչո՞ւ օտար ազգաց պատ-  
մական կեանիքի մէջ թարթափինք, մի-  
թէ քաջորդւց անուամբ պարծենա-  
լու, մեր ներկայ կենաց զեղծումները  
բաւնալու և մեզ յուսալիր ու փայլուն  
ապագայ մը պատրաստելու համար  
չունիմք մեզ օրինակ քանի քանի Կրօ-  
նի և Հայրենեաց նուիրական սեղանի  
վերայ ՚ի զոհ ձենմերուող քաջնահա-  
տակներ և գիւցազուններ : Թողունք  
ներկայն, թռչնիք, սլանանք յետախա-  
ղաց ընթացիւք ասկից չըրեքտասան  
գար յառաջ, պատկերացնենք մեր ե-  
րեւակայութեան առջեւ Հայատանի  
հինգերորդ գարու ժողովրդական կենաց  
չքնաղ պատկերն : Խոչ պիտի տես-  
նեմք անդ, միթէ աշխարհակալ հզօր  
պետութիւն մի, որ ՚ի յագուրդ իւր

փառատիրութեան զավարհ բովանդակ ՚ի հիմնաց կը գլուխէ , բիւրաւոր կտրիմներ տարաժամ մահուան ան գունդին ճարակի կը տայ : - Ո՛չ , ճշմարիս աստուածապաշտ մոլովարդ մի , անմահութեան գեղանցոց ճառագոյթ մեր թագավորութիւն մի , որ հոգեով յերկինս կը վերասպանայ դեպ ՚ի յաւեւ տենականին գերագահ աթուալ , կը տեսնէ անդ զանմահ գառն - զՓրկին աբեզերաց - որ իւր թեւոց հոլանացն տակ կը կոչէ մարդկութիւնը , կ'զբաց լիովին Գողդութայի սարի վերաց հեւ զեալ արեան մեծ խորհուրդը , և իւր սիրար բոլորովին զմայլած աստուածութեան անհուն սիրոց վերաց , կ'ո գեւորի երկնազդեցիկ զօրութեամբ . առ սան կը հարկանէ աշխարհիս ու նայն սէրը , կը մերմէ անցաւոր մեծութիւնը , կը մերմէ փառքն ու վայելութիւնը և երկնային լուսով բարբորած իւր օրուն հրատապ ջերմութիւնը զր վայնելու համոր համարձակ կը դիմէ ՚ի դաշտ նահատակութեան . կը հարկանէ կրօնի և ազգութեան փառ թըշնամին եւ փառաւոր յաղթանակ կը կանգնէ :

Գրացի ազգի հումկութագաւոր մի , Յաղիերս , որց յաղթական կառաց անւոյն տակ չորսիշկուճ կը խորտակին ազգք և ազնոք , որոց ամեն զերասաան մեծութենէն սորտավիմամբ կը գոլոն թագաւորաց և պետութիւնը , յողդողդ բաղդին գեղածիծազ ժապտէն յանսահմանս հրապարաւած կը ձգտի բարձրանոլ , մինչեւ յամուս ծրաբել իւր սէդ և ամբարաւան գլուխը , կցը եսականութեամբ յաջ և յահեակ կը սաւառնի , կը դոռաց , սակաւցանող շանթեր կ'արձակէ . իւր ճակարի վերաց պատուհասի ահուելի կնվիք կը կրէ . իւր սուեդահին խորխութեան պատուան

դանը բիւրաւոր սմիւներով եւ եղեւ սումք սեւացեալ՝ մարդկութեան ան բաւ ակերտանց շեղակուաթին վերաց դրած է . . . . . Բայց գեռ այսու ան բաւակամն կը ջանայ իւր բարձր թուի ը մինչեւ անհուն թագաւորութեան սոհմանները հասցնել . կ'երգնու յարեւն Աստուծոյ - Արմեգի և Արհմեայ - բնաշնչ առնել յերկրէ զՓրիստունեւթիւն եւ հաստատել զօրէն մոգութեան : Աւստի մեծ բանակ մի կ'ուղարկէ ՚ի Հայաստան , որպէս զի Հայերը զինու զօրութեամբ մոգութեան աշակերտեն :

Բայց ՚ի զմւր որստացին ամպերն , ընդվանը ճայթեցին ամպրոպը , փայլստակեցին շանթիք և տեղացին կարկը սղառանալեաց : Ահա Հայաստանի աստուածատունկ դրախտէն ՚ի վեր կ'ընծիւզի յանկարծ քաջազդի շոռութիւն մի , Հայոց վարմին պասկ պարծանաց , Աղաստութեան վեհ զինուոր , Վարդան չքնառզ տիպարն առաքին եաց , Հայաստանի հայրն բարեգութ , սորտավիլին իւր թշնամեաց , նախանձելին քրիստոնէից : Նորա աշերն հոգւացող երկնային սրանչելալ լուսուց շղկը կ'ալտափայլին , հրավոր սիրան Անմոհին սիրավ կը առընքի , խակ մաքով մհ , երբէք նա ոյս աշխարհիս մէջ ը յաճիք , զէպ ՚ի յաւիտենական կենաց բարձունքներու վերաց կը թեւարիէ : Կը տեսնէ ինքնին ազգի խոջանի վիճակը , վանօրեից քանդումը , ուռ ըր տաճարաց կ'ասկուիլն , պիղծ ատրուշանաց կանդնումը , ուրացեալ Վատակայ և իւր համախանից զիւական ջանքն ու հնաբրը մոգութեան զէնը Հայաստանի մէջ տարածելու համար : Արզգոյ և լիովին խելամուտ կը լինի , որ Հայաստանի արքայական գահուն տապալումէն զինի աղդութեան պահպանութեան միակ

ապահով ասրատանաբան միացած էր  
Առաքելական Ս. Եկեղեցին, նա էր  
միայն Ազգութեան միացեալ շղթային  
ամենամեծ և խորհրդաւոր օղը, որոց  
խորակմամբ միւսթեան ամբողջ շրջ  
թայն պիտի քակուեր, և Ազգութեան  
կապերը պիտի խզէր, որով իւր քա-  
զաքային իշխանութեան կործանեալ  
շէնքի քեկորներուն վերաց ի առեգ ան-  
միսթար տակուին ողբացող Հայն,  
յետ ժամանակաց հեթանոսական խա-  
ւարի մէջ խապառ պիտի կորուսանէր  
իւր ազգայնութիւնը, անունը և յի-  
շատակը, Այս դասն, բայց ճշմարիտ  
խորհրդաւութիւնը յանհնարինս կը  
յուղէ զինքը, սիրող կը ճմիլ և կը մոր-  
մորի ազգի տպագոյ թշուառութեան  
վերաց, այնպէս իմն կ'երեւի իրեն, որ  
իւր սիրելի Հայրենիքը Պարսից լոփի.  
զող բացերուն մասնուած է, եկեղե-  
ցիք հիմն ի վեր կործանեալք, հայաշէն  
քաղաքք այրեացաւերք և ամայի, ան-  
տերունչ ժողովուրդն մաշեալ սպառ-  
եալ ի սուր սուսերի թշնամեաց: Կը  
տեսնէ իւր սիրելիքը, որ գետնաքարը  
գայլոց վոհմակներէն ի զնւր կը պո-  
ղատին, ի զնւր իրենց դազդոջ ձեռ-  
ները տատանելով՝ կողկողագին ձայնիւ  
գլուխութիւն կ'աղաղակեն: անգութ  
թշնամին չը լսեր նոցա աղիողորմ ող-  
բոց ճին աւ աղաղակը՝ որ բացանարակ  
հրդեհներու ոլորտապատցածուխերուն  
հետ մինչեւ երկնից կամսորները կը  
համնին, ամեն կողմ սուր, ամեն կողմ  
ապականութիւն, ծարաւի երկիրը գե-  
տացորդոր արեանց հեղեղներով կ'ուռ-  
գանի: Այս սրտաշարժ՝ տեսարանը  
սրտամութեան ահաւոր կայծ մը կը  
շղացնէ իւր աշաց մէջ, այլ եւս չէ  
կարող հանդուրժել, երկնից և Հայրե-  
նեաց նուիրական սէրը սրտի խորակին  
մէջ իւր ամենաքարձոր չերմատի-  
ճանին հայած էր: Ազգատութիւն,

կը գոչէ, ազգատութիւն խղճի և կրօնի,  
ազգատութիւն Հայրենեաց: Ազգատու-  
թիւն ձայն կը տան լերինք եւ ան-  
տառք, ազգատութիւն ձորք եւ բը-  
լուք, և ազգատութեան ձայնը՝ իրբեւ  
ելեքտրական հօսանք մը՝ ի քթթել ա-  
կան բովանդակ Հայատանը կը ցնցէ  
և կ'ոգեւորէ: Ազգատութեան աւե-  
տաբեր գալուստը կ'ողջունեն աբք և  
կանոյք, ծերք և մանկունք, ազգատք  
և շնականք, զինք կ'առնեն, զրահ կը  
զգենուն և ազգատութեան լուսափոյլ  
գրօշակին ներքեւ կը խնմբին:

Սրգէն Պարսից մոգախումբ բա-  
նակն հանդերձ Վասակաւ և այլ ու-  
րացեալ իշխանոք Տղմուտ գետի դա-  
րափանց վերաց իւր բանակը զրած էր:  
Ա. Վարդան եւս միաբանեալ նախա-  
րարներուլ եւ զօրքերավ՝ որոց թիւը  
66000 ի կը հաննէր, կը բանակի դէմ-  
յանդիման թշնամիցն: Նախ քան  
զարտերազմն զօրաց եռանդալից ճառ  
մը խօսելով՝ կը բացատրէ յառաջա-  
կաց ահաւոր պատերազմին մեծախոր-  
հուրդ նապատակը, կը քաջալերէ կը  
խրախուսէ զանննք երբէք չ'երկնչել  
ահաւոր թշնամին, այլ արիսւթեամբ  
մարտնչելով՝ ի պաշտպանութիւն հայ-  
րենի Ս. Օրինաց, յերկինսա անմահու-  
թեան բիւրակնեաց պատին ընդունիլ  
և յերերի քաջ անուն ժառ անզ ել գո-  
րաւց՝ ի դարս: Եւ երբ սեղան ուղ-  
զուելով ամենասուրբ Խորհուրդն կը  
մատուցուի և ամեններեան կը հազոր-  
դուին կենաբար մարմնոյ եւ արհան  
Փրկչն, բոլոր բազմութիւնն երկնաւ-  
ուոր նահատակութեան սիրով վառ-  
ուած՝ կը բարբարի և կը գոչէ միաբար-  
բառ, «Հաւասարենցի մահ մեր ընդ-  
մահ արդարաց և հեղումն արեան մե-  
րաց ընդ արիւն սուրբ Մարտիրոսացն,  
եւ համեսցի Աստուած ի կամսւոր  
պատարազս եւ մի տացէ զեկեղեցի

իւր ՚ի ձեռս հեթանոսաց ու Ո՛Հ, Բ՛նչ սքանչելի եռանդ, Բ՛նչ սրտառուշ ձայն, ահա կը յուղի սրտերնիս, ար տասուբն ինքնին կը հօսին աչքերէն, և ո՞ր ադամանդեայ սիրտ այն աղաւներ բամ զուարիժնաց քաղցրամիշիկ աւազ լը լսելով՝ Կարող է անդգայ գտնըւ ւիլ: Ո՛Վ տեսաւ կամ ով լուաւ երեկը քրիստոնէական արքիսահրաշլուս այն ազդի մը հանրական զինուորումնեան մէջ այսպիսի սքանչելի կերպիւ արտափայլին: Ո՛Ր երկիր կամ ո՞ր գաւառ երկնեց և ծնաւ մի աւուր մէջ սրբազն դիւցազնաց և կը բարձրանան բիւրներ, լուսերած հրեշտակներ . . . :

Արեգակը հօրիզոնէն վեր կը բարձրանաց, ռազմական որսուղնդ սատ ձայնէրը և սյն երկու հսկոյ բանակները. Հայքե Պարսիկը ահագին բաղմամիք իրար կը խռովուի: Տ լմուագեալը գոգոյես սարսափած արագօրէն կը սահի շամբէրու մէջէն իւր հետ տանելով շատ քաղերու արիւնաշաղախ գիտիներ, լեռներն ու անտառները խուճապելոց յուսահատական աղաղոկներով կ'արձագանգեն: Ահագին է Հայ դիւցազնաց ջրազպինդ բազուկներու տուած հարուածն, շատ քաջաւոյգ Պարսիկ իշխաններ, որք գեռ առաւտօտն գարնանային կենաց քաղըր արեւը կը վայելէն, նախ քան զմիջօրեայն սանդարձամետական անդունդը կը գահավիմին . . . : Բայց ահա որսուաց Մասիս, ցուրտ սառնամանիք հեղեղի պէս ՚ի վայր սահեցան իւր ալեւոր ճակատէն, ձայն տուին լերինք, գոչեցին բըլուրք, բաղնեցին ուժգին Հայկազնաց սրտերն, գաւն արտասուք թափեցին Հայոց շատ մանկուիք: Եւ ինչու չ'ողբաց Աղքն, ինչու ըստ հեծէ աշխարհն, երբ տեսնէ իւր հսկոյ դիւցազնին կարմիք վարդի պէս թառամին, երբ տեսնէ զՄեծն Վարդան խաղմի գաշոին

մէջ գիտապաստ փուռւած: բոցափայլ աչքերն խապառ մթագնեալ, մսհուանն մութ սոտուելն իւր գէմքը պատած, Հայոց կտրիճ զինուորներն մէկ մանը գաղով հնձուած, գաղնանային ծաղկալից գաշոն նայա սուրբ արեամբ ներկեալ . . . : Ա՛Հ, անկան, թօշնեցան, թառամեցան վորգագեղ ծաղկիներու նման, որք գեռ իրենց կոկոններու մէջ ըստ փիմթած սանակոխ կը լինին այգուն անգութ գաղանի մը գարշապարներուն տակ, սակայն իրենց անունն ու յիշատակը անմահ մնաց և պիտի մնայ իրենց արեամբ նուիրագործեալ Հայաստանն այց Ա. Եկեղեցւոյ և Աղդի գյուղութեան հետո Նոցա սուրբ յիշատակը միշտ պիտի վառէ և բորբոքէ Հայ սրտերը գարուց ՚ի գարս հաշակելու նոցա նոհատակութեան հանդէար:

Բայց Հա՛ք իմ և Եղբարք, միմէ Արաազու գաշտին մէջ անկեալ գիւցազնաց յիշատակը տօնելով մեր երախտագիտութեան պարտքը լիովին կատարած կը լինիմք: միմէ մէք եւս չունիմք այսօր մեզ համար անհատական սրտեր, որոց զացումը նոյն խակ Եկեղեցւոյ և Աղդի գյուղութեան մէծ վատանդ կը սպառնաց: Մէք եւս չունիմք այսօր մեզ գէմ ահագին ուսիս մը որ մեր անտարբերութենէն ոյժ և հոգի առած յաջ և յահեակ կը հարկանէ իւր երկսայրի սուրն եւ ահագին կտորածք ու նախճիբք կը գործէ, ազդաշնչն խուլութիք կը յարուցանէ Աղդի խաղաղութիւնը վրդովելու համար: Պարձնենք մեր տեսութիւնը Հայաստանի վերսոյ, զննենք նորա մութ խորչերը և ահա մեզ պիտի ներկայանաց սրտաձմիլիկ տեսարան մը որ մեր աչքերէն յորդ արտասուաց վտակներ պիտի քամէ: Խումբ մի Հայ եղագարք՝ որք անագործն բռնաւորի

մը , տդիսութեան խաւարի անգութ  
ձիրաններուն տակ տառապագին կը  
հեծեն , որք ոչ իրենց պարոքը կը  
ճանշան ոչ իրաւունքը : Կը թողուն  
որ անօրէն Քիւրան Հայոց գիրդ կու-  
սանքն ծաղկի պէս խլէ ընտանեաց ծո-  
ցէն , կը թողուն որ Հայոց Ա . Եկեղե-  
ցւոյ նուիրական խորանն , որոյ սրբու-  
թեան եւ անարատութեան համար  
երբէմն Վարդանանց գարուն մէջ նո-  
ցա հարբ՞ն զՊարսիկս լեզապատառ և  
գլխապատառ վանեցին անսուրք ձեռ-  
քէր , հրէային գաղաններ չըրաշար  
որ աղջեն . . . : Ո՞ւր թողունք հասպա  
Հայ անուան նախատինք բերող այն  
սեւագէմ ձիւալինքն , խաւարի կըր  
արբաննեակներն , որք գեռ քիչ ժամու-  
նակ առ ոջ իրենց գիււահնար մեքե-  
նաներու այնչափ մրգիալց փոթորիկ-  
ներ յարուցին Ազգին մէջ , անհամար  
թուխ ամսէր կուտակեցին նորա վե-  
րայ , որոց գժոխային փայլակին զարկաւ  
և վիրաւորեց Ազգին արդէն վիրապից  
կէանքը :

Այսպէս ահա մէր սիրելի Ազգն  
թէ օսարներէն և թէ իւր խորթ որ-  
դիներէն յանհնարինս կը տառապի ,  
իւր աղլիոզրմ հեծութեան ձայները  
զգայուն սրտերու խորը կը թափանցէն :  
Սակայն Բնէլէ այս ամեն աղլտից պատ-  
ճառն , ոչ ասպաքէն տգիտութիւնը , որ  
շատ աղդէր յաւիտենական կործան-  
ման անդունդին մէջ գահավիժելէն  
զինի Հայ մոքերու վերայ եւս կը բըռ-  
նանայ այսօր և իւր ահեղ կոտորածը  
կը շարունակէ : Ահ , ալ բաւական է  
Հարբ և եղբարք , սրբենք մէր Ազգին

Եշուառ տրտասունքներն , պատենք  
սիրավ նորա արիւնավմամաւ վէրքե-  
րըն , և Բնէլէս . . . յարատեւ ջանիւք և  
անխօնջ աշխատութեամբ պատերազ-  
մելով ագիտութեան խաւարի գէմ ,  
զարնենք այդ մահազգեաց թշնամին  
և խորակինք նորա բոլոր զօրութիւնը  
Թող այսօր Տղմնւտ գետի ափերը  
հանգչող դիւցազանց աձիւններէն  
փրկառէտ կայծ մի շոլայ , վառէ մեր  
առ կայծեալ սրտերը , բորբոքէ և ան-  
մահացնէ : Ուխտենք այժմէն հանգչոն  
Վարդանանց նուիրել մէր անձը Ազ-  
գային յառաջազիմութեան համար :  
Այս , ուխտենք սիրել , միշտ սիրել ,  
մէր թշուառ ու տառապակիր Ազգն ,  
նորա բարեռքութեան և բարելաւու-  
թեան համար զլ խնայենք մէր քիրտն ,  
ջանքն ու աշխատութիւնը : Այն ա-  
տեն Ազգի մէջ խուլխութեան որոնն  
սերմաննզ վարձկաններու սատանայա-  
կան մեքենանները չարաշար պիտի խոր-  
ատակին և ինքեանք խապառ հալածա-  
կան պիտի լինին Ազգի մէջէն , ինչպէս  
մաւթ շամանդաղները ՚ի ծագել արե-  
գական : Այն ատեն Ազգը նոր ոզի ,  
նոր եռանդ պիտի զգենու և ժամա-  
նակին համընթաց պիտի յառաջաղիմէ :  
Այն ատեն պիտի կարողանամբ ասել  
համարձակ թէ հարազատ որդիք եմք  
Վարդանանց , և ապագան ոսկի տա-  
ռերով պիտի զբօշմէ մէր անունը ա-  
լեւոր Մասեաց սարի վերայ :

Ա-Եպիս Կարապետեան  
Պուլեցի Ալա . Ժուո .  
Վարժարանի .